

Աշխատավայրում քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության մասին Խորհրդի 98/24/ԵՀ հրահանգի իրականացման շրջանակներում աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների առաջին ցանկը սահմանող Հանձնաժողովի 2000 թվականի հունիսի 8-ի 2000/39/ԵՀ հրահանգ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Աշխատավայրում քիմիական նյութերի հետ շփման հետևանքով առաջացող ռիսկերից աշխատողների առողջության և անվտանգության պաշտպանության մասին» Խորհրդի 1998 թվականի ապրիլի 7-ի 98/24/ԵՀ հրահանգը (1) և, հատկապես, դրա 3(2) հոդվածը,

հաշվի առնելով Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով Խորհրդատվական կոմիտեի եզրակացությունը,

Քանի որ

1) 98/24/ԵՀ հրահանգի համաձայն՝ Հանձնաժողովը նախատեսում է առաջարկել եվրոպական նպատակներ՝ աշխատողներին քիմիական ռիսկերից պաշտպանելու համար՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների ձևով, որոնք պետք է սահմանվեն Համայնքի մակարդակով,

2) այս խնդիրն իրականացնելիս՝ Հանձնաժողովին աջակցել է Հանձնաժողովի 95/320/ԵՀ որոշման համաձայն ստեղծված՝ Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն,

3) յուրաքանչյուր քիմիական ազդանյութի դեպքում, որի համար Համայնքի մակարդակով սահմանված են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ, անդամ պետություններից պահանջվում է աշխատավայրում սահմանել ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ազգային նորմա՝ հաշվի առնելով Համայնքի մակարդակով սահմանված թույլատրելի սահմանային նորման՝ ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն որոշելով դրա բնույթը,

4) աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաները պետք է համարվեն աշխատավայրում աշխատողների առողջության պահպանությունն ապահովող ընդհանուր մոտեցման կարևոր բաղադրիչ՝ ուղղված վտանգավոր քիմիական նյութերից առաջացող ռիսկերից պաշտպանությանը,

5) աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների առաջին և երկրորդ ցանկերը սահմանվել են Հանձնաժողովի 91/322/ԵՏՀ և 96/94/ԵՏՀ հրահանգներով (3), (4)՝ «Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված ռիսկերից

աշխատողների պաշտպանության մասին» Խորհրդի 1980 թվականի նոյեմբերի 27-ի 80/1107/ԵՏՀ հրահանգի (5) շրջանակներում,

6) 80/1107/ԵՏՀ հրահանգը ուժը կորցրած է ճանաչվում 98/24/ԵՀ հրահանգով՝ 2001 թվականի մայիսի 5-ից,

7) նպատակահարմար է 98/24/ԵՀ հրահանգի շրջանակներում կրկին սահմանել աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ, որոնք 80/1107/ԵՏՀ հրահանգի շրջանակներում սահմանվել էին 91/322/ԵՏՀ և 96/94/ԵՀ հրահանգներով,

8) հավելվածում սահմանված ցանկն ընդգրկում է 96/94/ԵՀ հրահանգի հավելվածում նշված նյութերը և ներառում է մի շարք այլ ազդանյութեր, որոնց համար Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեի կողմից առաջարկվել են ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ՝ աշխատանքի հիգիենայի ազդեցությունների վերաբերյալ առկա ամենավերջին գիտական տվյալների գնահատման արդյունքում և հաշվի առնելով չափման մեթոդների հասանելիությունը, 96/94/ԵՀ հրահանգը պետք է վերամշակվի՝ հաշվի առնելով վերը նշվածը և ելնելով հստակության նկատառումներից,

9) որոշ նյութերի առումով անհրաժեշտ է սահմանել կարճաժամկետ ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային նորմաներ՝ դրանց կարճաժամկետ ազդեցությանը ենթարկվելուց առաջացող ազդեցությունները հաշվի առնելու համար,

10) որոշ ազդանյութերի առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև մաշկի միջոցով ներթափանցելու հնարավորությունը՝ պաշտպանության հնարավոր առավելագույն մակարդակն ապահովելու համար,

11) սույն Հրահանգով գործնական քայլ է կատարվում՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության զարգացմանը,

12) սույն Հրահանգով նախատեսված ակտերը համապատասխանում են «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված միջոցառումների ներդրման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի (6) 17-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույնով սահմանվում են Համայնքի՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաները՝ հավելվածում նշված քիմիական ազդանյութերի համար:

Հոդված 2

Անդամ պետությունները հավելվածում թվարկված քիմիական ազդանյութերի համար սահմանում են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ ազգային նորմաները՝ հաշվի առնելով Համայնքի նորմաները:

Հոդված 3

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը՝ ամենաուշը մինչև 2001 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է սույն Հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ իրենց պաշտոնական հրապարակման պահին: Անդամ պետությունները որոշում են այդ հղումը կատարելու ձևը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 4

96/94/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 3(1) հոդվածում նշված ամսաթվից:

Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 2000 թվականի հունիսի 8-ին: